2/26.2/175

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«15» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0015-21

Ձեռնարկողը՝ ***«Հայնախագիծ» ԲԲԸ***
Ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ ***«Վայոց ձոր-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Վայոց ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 14 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 0015-21

<<15>> 01 2021թ.

«Վայոց ձոր-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ «Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝ Հիմնադրութային փաստաթուղթ.

- ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, գծագրական նյութեր

Ներածական մաս. «Վայոց ձոր-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) հայեցակարգային և սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիր կառավարմամբ:

Վայոց ձորի մարզի (այսուհետ՝ Մարզ) «Վայոց ձոր-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը մշակվել է քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9-1, 17 սեպտեմբերի 2019թ.), Կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման համաձայն:

Նկարագրական մաս. Մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ արևելքում, մարզկենտրոնը Եղեգնաձոր քաղաքն է (8.3 հազար բնակիչ), գտնվում է Երևանից 124կմ հեռավորության վրա, այն սահմանակից է Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի մարզերին և Նախիջևանի հետ:

Մարզի տարածքը՝ 2308կմ² է, քաղաքային համայնքները՝ 3 են, գյուղական համայնքները՝ 41, իսկ գյուղական բնակավայրերը՝ 52 են:

Տարածքի գլխավոր գետը Արաքս գետի ձախափնյա վտակ Արփան է՝ իր աջափնյա Ելփին և ձախափնյա Գնիշիկ վտակներով: Այն սկիզբ է առնում Վարդենիսի հրաբխային լեռնավահանի՝ և Զանգեզուրի լեռնաշղթաների միացման կետից, հարավ-արևելյան լանջերից մոտ 3200մ բարձրությունից: Գետի վերին հոսանքը ձևավորվում է հիմնականում ստորգետնյա ջրերից և աղբյուրներից: Ողողահունը լայնանում է Վայքի, Եղեգնաձորի և Արենի գյուղի տարածքներում:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Մարզի հողային ֆոնդում մեծ տեսակարար կշիռ են կազմում թեք ու զառիթափ լեռնալանջերը (մոտ 40-42%): Հողատեսքը հիմնականում գյուղատնտեսական նշանակության հողեր են, որոնք կազմում են մարզի տարածքի 90.67%-ը: Գյուղատնտեսական հողատարածքներում մեծ տոկոս են կազմում արոտները (52 %): Գյուղատնտեսական հողատեսքերից մշակվում է միայն 8.4%-ը (վարելահողերը՝ 16.2 հազ.հա բազմամյա տնկարկները՝ 1.29 հազ.հա): Հիմնականում մշակվում են կիսաանապատային և լեռնատափաստանային լանդշաֆտները:

Մարզի տարածաշրջանի ՄՄՏՀ նախագծում արտացոլված են բնական պաշարների (օդ, ջուր, հող, բուսականություն) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության, տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների և կաթսայատների ճիշտ տեղադրման արդյունքները՝ անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ՝ կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Մարզը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է՝ հարուստ կենսաբազմազանությամբ, բուսական և կենդանական աշխարհների յուրօրինակությամբ, երկրաբանական և լանդշաֆտային օբյեկտների գիտաճանաչողական բարձր արժեքներով, առողջապահական ռեկրեացիոն ակնառու նախադրյալներով: Մարզի ցածրադիր գոտում, մինչև 1400մ բարձրությունը, կլիման չոր է՝ ջերմաստիճանի մեծ տատանումներով՝ մինչև 400մմ տեղումներով:

Վայոց ձորի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնք տարբեր են ըստ կառուցման ժամանակաշրջանի (Ք.ԾԱ 2-1 հազարամյակ մինչև 19-րդ դար): Ավելի բազմազան են IX- XIII դարերի հուշարձանները (եկեղեցիներ, վանքային համալիրներ, խաչքարեր, բնակատեղիներ, ամրոցներ, կամուրջներ և այլն): «Վայոց ձոր-3» միկրոռեգիոնի համայնքների տարածքում առկա են նոր հայտնաբերբած հուշարձաններ:

«Վայոց ձոր-3» տարածքը ներառում է Արենի /Ամաղու/, Արփի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Գնիշիկ (Մոզրով), Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ (ընդամենը 9) գյուղական բնակավայրերը:

«Վայոց ձոր-3» տարածաշրջանի ՄՄՀՏՊԳ նախագիծը ընդգրկում է 43785,69հա տարածք, բնակչության թիվը կազմում է 10982 մարդ, հեռանկարում 12080,2 մարդ:

Հեռանկարային զարգացման շրջանակներում համայնքների հողային ֆոնդի՝ նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունները՝ ներկա վիճակում և հեռանկարում ունենալու են հետևյալ բաշխվածությունը.

Արենի համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 149.9հա, հեռանկարում՝ 152.27հա, որից բնակելի կառուցապատման՝ 100.76հա, հեռանկարում՝ 104.49հա, հասարակական կառուցապատման՝ 2.49հա, հեռանկարում՝ 5.074հա, ընդհանուր օգտագործման՝ 16.98հա, խառը կառուցապատման՝ 0.28հա, հեռանկարում չեն փոխվելու, այլ հողեր՝ 29.67հա, հեռանկարում՝ 25.446հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3919.94հա հեռանկարում 3904.59հա, որից վարելահող՝ 90.82հա, հեռանկարում՝ 90.54հա, արոտավայրերը՝ 1164.7հա, հեռանկարում՝ 1161.5հա, այլ հողատեսքերը՝ 24.06.45հա, հեռանկարում՝ 2394.58հա, բազմամյա տնկարկներ՝ 229.27հա, խոտհարքեր՝ 28.87հա հեռանկարում չի փոխվելու,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 53.64հա, հեռանկարում՝ 52.11հա, որից գյուղարտադրական՝ 12.3հա, հեռանկարում՝ 10.77հա, արդյունաբերական՝ 0.01հա, պահեստարանների՝ 0.09հա, ընդերքօգտագործման՝ 41.24հա, հեռանկարում չեն փոխվելու,

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 15.08հա, հեռանկարում՝ 15.08հա, այդ թվում էներգետիակայի՝ 0.04հա, տրանսպորտի՝ 15.03հա, կապի՝ 0,1հա հեռանկարում չեն փոփոխվելու,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 173.32հա, հեռանկարում՝ 187.83հա, որից պատմության և մշակույթի 18.92հա, հեռանկարում՝ 33.43հա, հատուկ նշանակության հողեր՝ 0.24հա, բնապահպանական՝ 154.4հա հեռանկարում՝ չեն փոխվելու,

- ջրային հողեր՝ 47.4հա, հեռանկարում՝ չի փոխվելու, որից գետեր՝ 37.98հա, ջրամբարներ՝ 0.28հա, ջրանցքներ՝ 2.94հա, ջրտնտ. այլ օբ.՝ 6.2հա, հեռանկարում չեն փոխվելու:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 4359.52հա է:

Արփի համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 107.26հա, հեռանկարում՝ 111.575հա, որից բնակելի կառուցապատման՝ 63.82հա, հեռանկարում՝ 68.925հա, հասարակական կառուցապատման՝ 6.33հա, հեռանկարում՝ 6.45հա, ընդհանուր օգտագործման՝ 8.78հա, հեռանկարում չի փոխվելու, այլ հողեր՝ 28.33հա, հեռանկարում՝ 27.42հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1202.96հա հեռանկարում՝ 1184.535հա, որից վարելահող 287.11հա, հեռանկարում՝ 279.225հա, արոտավայրերը՝ 404.2հա, հեռանկարում՝ 402.4հա, այլ հողատեսքերը՝ 477.79հա, հեռանկարում՝ 469.05հա, բազմամյա տնկարկներ՝ 11.18հա, խոտհարքեր՝ 22.68հա, հեռանկարում չեն փոխվելու,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 10.66հա, հեռանկարում՝ 18.43հա, որից արդյունաբերական՝ 0.09հա, հեռանկարում՝ 9.11հա, գյուղարտադրական՝ 4.07հա, հեռանկարում՝ 2.82հա, ընդերքօգտագործման՝ 6.5հա հեռանկարում չի փոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 9.17հա, հեռանկարում՝ 12.05հա, այդ թվում կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.13հա, հեռանկարում՝ 3.01հա, էներգետիակայի՝ 0.1հա, տրանսպորտի՝ 9.01հա, կապի՝ 0.02հա հեռանկարում՝ չեն փոխվելու,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2.8հա, հեռանկարում՝ 6.26հա, հանգստի համար նախատեսված՝ 0հա, հեռանկարում՝ 2.93հա, պատմամշակութային՝ 2.8հա, հեռանկարում՝ 3.33հա,

- անտառային հողեր՝ 10.91հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- ջրային հողեր՝ 14.87հա, հեռանկարում չի փոխվելու:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 1358.63հա է:

Ագարակաձոր համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 82.79հա, հեռանկարում՝ 83.3հա, որից բնակելի կառուցապատման՝ 61.57հա, հեռանկարում՝ 62.573հա, հասարակական կառուցապատման՝ 1.74հա, ընդհանուր օգտագործման՝ 12.49հա, հեռանկարում չի փոխվելու, այլ հողեր՝ 6.99հա, հեռանկարում՝ 6.497հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5675.14հա հեռանկարում՝ 5674.63հա, որից վարելահող՝ 730.07հա, հեռանկարում՝ 729.91հա, բազմամյա տնկարկներ՝ 24.88հա, հեռանկարում՝ 24.53հա, արոտավայրերը՝ 967.76հա, խոտհարքեր՝ 92.3հա, այլ հողատեսքերը՝ 3860.13հա, հեռանկարում չեն փոխվելու,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 18.03հա, որից՝ գյուղարտադրական՝ 6.22հա, ընդերքօգտագործման հողեր՝ 11.81հա հեռանկարում չեն փոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 1.42հա, հեռանկարում՝ 2.61հա, այդ թվում էներգետիակայի՝ 0.54հա, հեռանկարում չի փոխվելու, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.08հա, հեռանկարում՝ 1.27հա, տրանսպորտի՝ 0.8հա, հեռանկարում՝ չի փոխվում, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6.62 հա, հեռանկարում՝ 5.67հա, որից պատմության և մշակույթի 6.62հա, հեռանկարում՝ 5.67հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 59.07հա, հեռանկարում 57.88հա,

- ջրային հողեր՝ 17.09հա, հեռանկարում՝ չի փոխվելու:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 5878.54հա է:

Աղավնաձոր համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 243.38հա, հեռանկարում չի փոխվելու, որից բնակելի կառուցապատման՝ 152.84հա, հասարակական կառուցապատման՝ 3.51հա, ընդհանուր օգտագործման՝ 15.63հա, այլ հողեր՝ 71.4հա հեռանկարում չեն փոխվելու,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4745.55հա հեռանկարում 4747.35հա, որից վարելահող 379.66հա, հեռանկարում՝ 381.46հա, արոտավայրերը՝ 1081.54հա, խոտհարքեր՝ 127.16հա, բազմամյա տնկարկներ՝ 515.6հա, այլ հողատեսքերը՝ 2641.59հա, հեռանկարում չեն փոխվելու,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 14.13հա, հեռանկարում՝ 12.63հա, որից արդյունաբերական՝ 1.63հա, հեռանկարում՝ չի փոխվելու, գյուղարտադրական՝ 12.43հա, հեռանկարում՝ 10.93հա, պահեստարանների՝ 0.07հա հեռանկարում չի փոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 15.76հա, հեռանկարում՝ 20.3հա, այդ թվում, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.33հա, հեռանկարում՝ 4.87հա, էներգոտիկայի 5.19հա, կապի՝ 4հա, տրանսպորտի՝ 6.24հա,հեռանկարում չեն փոխվելու,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 10.57հա, հեռանկարում՝ 6.3հա,

- ջրային հողեր՝ 15.61հա, հեռանկարում՝ չի փոխվելու:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 5045հա է:

Գնիշիկ համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 26.26հա, հեռանկարում՝ 26.41հա, որից բնակելի կառուցապատման՝ 14.54հա, հեռանկարում՝ 16.94հա, հասարակական կառուցապատման՝ 3.27հա, ընդհանուր օգտագործման՝ 2.45հա, հեռանկարում՝ չեն փոխվելու, այլ հողեր՝ 6հա, հեռանկարում 3.75հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6686.61հա, հեռանկարում՝ 6686.46հա, որից վարելահող 257.67հա, հեռանկարում՝ 257.63հա, բազմամյա տնկարկներ՝ 51.1հա, հեռանկարում՝ 50.99հա, արոտավայրերը՝ 5987.27հա, խոտհարքեր՝ 85.75հա, այլ հողատեսքերը՝ 304.82հա, հեռանկարում փոփոխություններ չկան,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 6.99հա, որից գյուղարտադրական՝ 4.99հա, ընդեքօգտագործման՝ 2հա, հեռանկարում փոփոխություններ չկան,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 14.03հա, հեռանկարում՝ 14.48հա, այդ թվում կոմունալ ենթակառուցվածքների՝ 0հա, հեռանկարում՝ 0.45հա, տրանսպորտի՝ 14.02հա, կապի՝ 0.01հա, հեռանկարում՝ չեն փոխվում,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 10.58հա, հեռանկարում՝ 10.13հա,
- ջրային հողեր՝ 3.56հա:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 6748.03հա է:

Ելփին համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 118.34հա, հեռանկարում՝ 119.2248հա, որից բնակելի կառուցապատման՝ 84.05հա, հեռանկարում՝ 84.9348հա, հասարակական կառուցապատման՝ 2.44հա, հեռանկարում՝ 3.087հա, ընդհանուր օգտագործման՝ 13.41հա հեռանկարում չի փոխվում, այլ հողեր՝ 18.44հա, հեռանկարում՝ 17.793հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5427.87հա հեռանկարում 5423.38հա, որից արոտավայրերը՝ 3567.09հա, հեռանկարում՝ 3566.697հա, վարելահող 589.22հա, խոտհարքեր՝ 129.25հա, բազմամյա տնկարկներ՝ 44.05հա, հեռանկարում չեն փոխվելու, այլ հողատեսքերը՝ 1095.26հա, հեռանկարում՝ 1094.163հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 8.25հա, որից արդյունաբերական՝ 0.57հա, գյուղարտադրական՝ 7.68հա, հեռանկարում չեն փոխվելու,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 19.9հա, հեռանկարում՝ 20.5052հա, այդ թվում, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.03հա, հեռանկարում՝ 1.127հա, տրանսպորտի՝ 13.71հա, հեռանկարում՝ 13.2182հա, կապի՝ 0.01հա, էներգոտիկայի 6.15հա, հեռանկարում չեն փոխվելու,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3.85հա, հեռանկարում՝ չի փոխվելու,
- ջրային հողեր՝ 11.89հա, հեռանկարում՝ չի փոխվելու:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 5587.1հա է:

Խաչիկ համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 103.08հա, հեռանկարում՝ 103.7108հա, որից բնակելի կառուցապատման՝ 79.08հա, հեռանկարում՝ 79.474հա, հասարակական կառուցապատման՝ 3.18հա, հեռանկարում՝ 3.698հա, ընդհանուր օգտագործման՝ 8.03հա հեռանկարում չի փոխվելու, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ՝ 0հա, հեռանկարում՝ 0.4648հա, այլ հողեր՝ 12.79հա, հեռանկարում՝ 12.044հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6877.4հա հեռանկարում 6875.9839հա, որից վարելահող 1184.19հա, հեռանկարում՝ 1183.796հա, արոտավայրերը՝ 1378.84հա, խոտհարքեր՝ 44.04հա, բազմամյա տնկարկներ՝ 38.11հա, հեռանկարում չեն փոխվելու, այլ հողատեսքերը՝ 4232.22հա, հեռանկարում՝ 4231.1979հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 11.59հա, հեռանկարում՝ 12.3753, որից գյուղարտադրական՝ 0.7հա, հեռանկարում՝ 1.4853հա, արդյունաբերական՝ 0.84հա, պահեստային հողեր՝ 0.05հա, ընդերքօգտագործման՝ 10հա, հեռանկարում չեն փոխվելու,
- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 7.04հա, այդ թվում, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.02հա, տրանսպորտի՝ 6.98հա, կապի՝ 0.02հա, էներգոտիկայի 0.02հա, հեռանկարում չեն փոխվելու,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 34.52հա, հեռանկարում՝ չի փոխվելու,
- անտառային հողեր՝ 156.9հա, հեռանկարում չի փոխվելու,
- ջրային հողեր՝ 1.03հա, հեռանկարում՝ չի փոխվելու:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 7192.81հա է:

Չիվա համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 87.53հա, հեռանկարում՝ չի փոխվում, որից բնակելի կառուցապատման՝ 68հա, հեռանկարում՝ 67.947հա, հասարակական կառուցապատման՝ 2.49հա, հեռանկարում՝ 2.543հա, ընդհանուր օգտագործման՝ 9.82հա, այլ հողեր՝ 7.22հա, հեռանկարում՝ չեն փոխվելու,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2619.37հա հեռանկարում 2602.15հա, որից վարելահող 285.62հա, արոտավայրերը՝ 414.07հա, հեռանկարում՝ 399.07հա, խոտհարքեր՝ 56.16հա, բազմամյա տնկարկներ՝ 22.6հա, հեռանկարում չեն փոխվելու, այլ հողատեսքերը՝ 1840.92հա, հեռանկարում՝ 1838.7հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 3.29հա, որից գյուղարտադրական՝ 3.29հա, հեռանկարում չեն փոխվում,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 11.03հա, այդ թվում, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.456հա, տրանսպորտի՝ 9.67հա, էներգոտիկայի 0.91հա, հեռանկարում չեն փոխվելու,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6.14հա, հեռանկարում՝ 23.36հա,

- անտառային հողեր՝ 383.08հա, հեռանկարում չի փոխվելու,

- ջրային հողեր՝ 5.55հա, հեռանկարում՝ չի փոխվելու:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 3115.99հա է:

Ռինդ համայնք՝

- բնակավայրի հողեր՝ 161.6հա, հեռանկարում՝ 162.2728հա, որից բնակելի կառուցապատման՝ 142.73հա, հեռանկարում՝ 143.5239հա, հասարակական կառուցապատման՝ 2.03հա, հեռանկարում՝ 2.0533հա, ընդհանուր օգտագործման՝ 11.22հա, հեռանկարում՝ չի փոխվելու, այլ հողեր՝ 5.62հա, հեռանկարում՝ 5.4756հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4262.32հա հեռանկարում 4250.6137հա, որից վարելահող 323հա, խոտհարքեր՝ 49.38հա, բազմամյա տնկարկներ՝ 39.39հա, հեռանկարում չեն փոխվում, արոտավայրերը՝ 1411.45հա, հեռանկարում՝ 1410.0165հա, այլ հողատեսքերը՝ 2439.1հա, հեռանկարում՝ 2428.8272հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 6.27հա, որից արդյունաբերական՝ 0.25հա, գյուղարտադրական՝ 6.02հա, հեռանկարում չեն փոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 3.96հա, հեռանկարում՝ 5.3935հա, այդ թվում, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.27հա, հեռանկարում՝ 1.7035հա, էներգոտիկայի 3.58հա, կապի՝ 0.11հա, հեռանկարում չեն փոխվելու,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 15.26հա, հեռանկարում՝ 24.86հա,

- անտառային հողեր՝ 49.28հա, հեռանկարում չի փոխվելու,

- ջրային հողեր՝ 1.38հա, հեռանկարում՝ չի փոխվելու:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ 4500.07հա է:

Բնակչության հիմնական զբաղմունքն է՝ գինեգործությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակությունը, հողագործությունը, մեղվաբուծությունը, հանքային ջրերի արտադրություն և առևտուրը:

Ներկա անտառշինությամբ «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի ընդհանուր մակերեսը կազմում է 15065.3հա և ներառում է 7 անտառպետություններ: Ամենափոքր մակերեսը զբաղեցնում է Սարավանի անտառպետությունը՝ 973 հեկտար (6.5%), իսկ ամենամեծը՝ Հերհերի անտառպետությունն է՝ 3606 հեկտար (24%):

Անտառտնտեսության տարածքում արտադրական նշանակության անտառները բացակայում են:

Պաշտպանական նշանակության անտառածածկի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ընդհանուր անտառածածկի 33.7%-ը (2580.9հա): Հատուկ նշանակության անտառները զբաղեցնում են 5075.3հա (66.3%),: Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառային հողերը կազմում են 12351հա, որից անտառածածկ ընդհանուր մակերեսը 7656.2 հա է (62.4%), նույն թվում ընդամենը 411.1 հեկտարն է անտառմշակույթ (3.3%), ոչ անտառածածկ մակերեսը 4676.2հա է:

Ընդհանուր ոչ անտառային մակերեսը կազմում է 2703հա, որից արոտավայրերը զբաղեցնում են 1300.7հա, իսկ 1315.5 հեկտարը ոչ անտառային այլ հողերն են:

Անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- անտառային մշակույթների հիմնում,
- ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում,
- բնական վերաճին օժանդակող համալիր միջոցառումներ,
- անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում,
- ընտրովի սանիտարական հատումներ:

«Վայոց ձոր-3» միկրոռեգիոնի մեջ ներառված բոլոր բնակավայրերի տարածքներում աճում են բազմաթիվ հազվագյուտ բուսատեսակներ:

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարումը կարգավորված չէ, քանի որ այդ բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է տեղական աղբյուրներից: Կապտաժները և ջրամատակարարման ցանցերը հիմնականում չեն համապատասխանում սանիտարական նորմերին, չունեն վարակազերծման կայաններ և օրվա կարգավորիչ ջրամբարներ: Մարզի տարածքում կենտրոնացված ջրամատակարարում ունեն Ջերմուկ, Վայք և Եղեգնաձոր քաղաքները:

Անբավարար վիճակում է գտնվում մարզի ջրահեռացման համակարգը, երեք քաղաքներից ոչ մեկը չունի կեղտաջրերի մաքրման կայաններ, որոնց կառուցման համար անհրաժեշտ է մոտ 2.0 մլրդ դրամ գումար:

Գյուղական համայնքների աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս «Վայոց ձոր-2» ամբողջ տարածաշրջանի համար մեկ միասնական կեղտաջրերի մաքրման կայանի ընտրություն: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար գյուղական համայնքներում, նախատեսվում է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայան, որն ունի բազմաստիճանային մաքրման կառուցվածք և ներառում է սեպտիկ խուց՝ 98% մաքրման արդյունավետությամբ:

Մարզի տարածքում կենտրոնացված ջրամատակարարում ունեն Ջերմուկ, Վայք և Եղեգնաձոր քաղաքները:

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարումը կարգավորված չէ, քանի որ այդ բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է տեղական աղբյուրներից: Կապտաժները և ջրամատակարարման ցանցերը հիմնականում չեն համապատասխանում սանիտարական նորմերին, չունեն վարակազերծման կայաններ, օրվա կարգավորիչ ջրամբարներ:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Գնահատվել են խմելու ջրամատակարարման ոլորտին առնչվող հետևյալ խնդիրները.

- ջրատարների և ջրամատակարարման բաշխիչ ցանցերի մաշվածություն (կորուստների բարձր տոկոս),
- գյուղական բնակվայրերում խմելու ջրի հաշվառման բացակայություն և ոչ արդյունավետ օգտագործում,
- անհրաժեշտ քանակով ջրապաշար ամբարելու համար համապատասխան ծավալով, պահանջվող նիշերի վրա տեղակայված ջրամբարների բացակայություն,
- խմելու ջրի գլխամասային կառույցների սանիտարական պահպանության գոտիների բացակայություն,
- ջրամատակարարման կառավարման ոչ բավարար իմացություն:

Վայոց ձորի մարզում ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում մակերևութային հոսքը կարգավորել ջրամբարներում: Ներկայումս մարզում կառուցված են 8 ջրամբար՝ շուրջ 50մլն. մ³ ծավալով: Մարզում առաջնային նախատեսվում է կառուցել նոր ջրամբարներ, ինչի արդյունքում կստեղծվի կարգավորված շուրջ 211մլն.մ³ ջրային պաշարներ՝ 265մլն.մ³ ծավալով ջրատվությամբ ինչը համապատասխան ծավալով կնվազեցնի հանրապետության տարածքից ջրային ռեսուրսների արտահոսքը:

Վայոց ձորի մարզի տարածքով անցնում են «Վարդենիս», «Գետափ», «Վայք» և «Շամբ» 220կՎ լարման օդային բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը: Մարզի տարածքում են տեղակայված նաև «Իրան-Հայաստան» 400 կՎ լարման կառուցվող էլեկտրահաղորդման գծի համար նախատեսված հենարանները:

Համաձայն նախագծի ՝ «Վայոց ձոր-3» միկրոռեգիոնալ տարածաշրջանով անցնում է՝ Ջերմուկ-Արարատ Dպ=700մմ մայրուղային գազատարը: Տարածաշրջանում ներառված համայնքներից գազաֆիկացված են միայն Ագարակաձոր (90 %), Աղավնաձոր (30 %) և Արփի բնակավայրերը: Արենի,Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ համայնքները գազաֆիկացված չեն: Նախատեսվում են նաև Արենի, Ռինդ, Չիվա, Ելփին, Խաչիկ բնակավայրերում համապատասխանաբար 10, 4, 2, 6, 20կմ երկարությամբ նոր գազատարների անցկացում:

Գազաֆիկացված գյուղական բնակավայրերի վարչական, հասարակական, ուսումնական, առողջապահական և արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական շենքերի ջերմամատակարարումն իրականացվում է գազի վառարանների և կաթսաների միջոցով: Չգազաֆիկացված բնակավայրերում ջերմամատակարարումն իրականացվում է փայտի, նավթի վառարանների կամ էլեկտրական տաքացուցիչների միջոցով: Ինչպես հասարակական, այնպես էլ անհատական բնակելի տների որոշ մասը տանքիներում ունեն տեղադրված արևային ջրատաքացուցիրներ:

Վայոց ձորի մարզով են անցնում երկու միջպետական նշանակության մայրուղային ճանապարհներ՝ Մ-2՝ Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի, Մ-10՝ Սևան-Մարտունի-Գետափ, և 6 հանրապետական նշանակության ճանապարհներ:

Մարզն ունի մեծ զբոսաշրջային ներուժ՝ պայմանավորված հանքային ջրերի և պատմամշակութային բազմաթիվ կոթողների առկայությամբ: Հայտնի է նաև իր գինիներով և խաղողի տեսակներով: Մարզը հարուստ է նաև արդյունահանման ենթակա հարուստ բնական պաշարներով:

«Վայոց ձոր-3» տարածաշրջանի համար զարգացման հեռանկարը կանխատեսվում է գյուղատնտեսության արտադրանքի վերամշակման և արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերության ճյուղերի զարգացմամբ:

Գրեթե բոլոր բնակավայրերն օժտված են զբոսաշրջության ոլորտում առկա ռեսուրսներով: Դրանք ներառում են ավանդական՝ ինչպես ճանաչողական տեսակները, այնպես էլ էքստրեմալ, բուժական, կրթական, տեղական հարուստ և էկոլոգիապես մաքուր սննդի, բնության հատուկ պահպանվող տարածքների այցելությունները, կենսաբազմազանության դիտումները և բազմաթիվ այլ տեսակները:

Մարզի գրեթե բոլոր էկոհամակարգերը ենթարկվում են մարդածին ազդեցության, որի արդյունքում անհետացման եզրին են հայտնվել տասնյակ բուսական և կենդանական տեսակներ, ինչն առավել նկատելի է անտառային և ջրային էկոհամակարգերի վրա:

Արձանագրվել են անտառներում վնասատուներով և հիվանդություններով վարակման զանգվածային դեպքեր և հրդեհներ, որոնք կապված են նաև կլիմայի փոփոխության հետ:

Ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր, որոնք պարունակում են միջոցառումներ՝ ուղղված անտառային տարածքների վերականգմանն ու անտառների կայուն ձևերի զարգացմանը և անտառային կենսաբազմազանության պահպանմանը:

Վայոց ձորի մարզում գոյություն ունեցող հատուկ պահպանվող տարածքները 2013 թվականի հողային հաշվեկշռով կազմում է 18169.5հա: Մարզում առկա են՝ «Ջերմուկի ջրաբանական», «Ջերմուկի անտառային», «Հերհերի նոսրանտառային» և «Եղեգնաձորի» պետական արգելավայրերը, ինչպես նաև առկա են 54 բնության հուշարձաններ: «Վայոց ձոր-2» տարածաշրջանի համար դոմինանտ և բնորոշ կենդանատեսակներից կարելի է նշել վայրի ոչխարը (հայկական մուֆլոն), բեզոարյան այծը, կովկասյան ընձառյուծը,գորշ արջը, վարազը, վայրի խոզը, անտառային կատուն, կաքավը: Տարածքում հանդիպում են նաև որսի կենդանիներ՝ գայլ, աղվես, քարակզաքիս և ջրային առնետ, էնդեմիկ կենդանիներից է Նեղ սևամարմինը:

Մարդկային գործոններով պայմանավորված տեղի են ունեցել բուսական և կենդանական աշխարհի քանակի կրճատում: Կենդանական և բուսական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցվել է հատուկ պահպանության տակ և գրանցվել է ՀՀ բույսերի ու կենդանիների Կարմիր Գրքերում:

Ճանապարհների վիճակի և դրանց բարելավման միջոցառումների բացակայությունը, վաղ գարնանն անասունների լեռնային արոտներ բարձրացնելն ու անկանոն արածեցումն առաջացրել է արոտավայրերի գերծանրաբեռնվածություն, ինչը լանջերի խիստ թեքության պայմաններում հանգեցրել է բուսածածկույթի նվազման և հողերի աստիճանական քայքայման: Դրա դեմ պայքարելու հարցը մարզում համարվում է առաջնակարգ խնդիր:

Առկա հիմնախնդիրներով պայմանավորված մարզում հողային ռեսուրսների կառավարման ոլորտում որպես գերակա ուղղություններ են դիտարկվում՝

1) մարզի և համայնքի հողերի օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողության ուժեղացումը,

2) հողերի օգտագործմանը և պահպանությանն ուղղված մարզային և համայնքային ծրագրերի իրականացումը,

3) հողերի դեգրադացիայի կանխարգելումը կամ նվազեցումը,

4) հակաէռոզիոն, հակասողանքային և մելիորատիվ միջոցառումների կազմակերպումը, խախտված հողերի վերականգնման /ռեկուլտիվացիա/ միջոցառումների և սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասերի միավորման /խոշորացման/ իրականացումը,

5) աղտոտված և դեգրադացված հողերի վերականգնման ու մոնիթորինգի ծրագրի միջոցառումների իրականացումը, ինչը հիմք կհանդիսանա մարզում դեգրադացիայի

ենթարկված հողատարածքների ուսումնասիրության, կենսաբանական վերակուլտիվացման ուղղությունների մշակման և մոնիթորինգային ցանցի ստեղծման համար:

Տարածաշրջանի համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն՝ արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն՝ արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը՝ թափոններով և կեղտաջրերով,
- աղմուկը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատման,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության բնական գործոններ են նաև սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրասպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 94,7 %-ը: Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 818.56տ/տարի: Մթնոլորտ վնասակար արտանետումներից «Վայոց ձոր-3» համայնքներից տարածաշրջանի տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 11.13մլն. դրամ տարի:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է: Արենի գյուղի աղմուկի աղբյուր է հանդիսանում գյուղի միջով անցնող հանրապետական նշանակության մայրուղին:

Համաձայն նախագծի միկրոռեգիոնի բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1083,85հա մակերես: Համայնքներում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը 9 է:

Հաճախակի է աղբի կուտակումը հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը:

Հատկացված տարածքը, որոք գտնվում է համայնքների վարչական սահմաններում, կենցաղային կոշտ թափոնների տեղափոխման, վնասազերծման, վերամշակման կազմակերպությունների և կառույցների հողամասերի և դրանց սանիտարական պահպանման գոտիների չափերով չի համապատասխանում սահմանված նորմերի պահանջներին: Տարածքները պարսպապատված չեն, անբարեկարգ են, չկան համապատասխան պայմաններ կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման և ախտահանման համար: Տարածքում կուտակված աղբը մշտապես ենթարկվում է ինքնայրման: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքը խիստ աղտոտված է, ուստի այդ աղբավայրը ենթակա է կոնսերվացման: Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 1656 տ/տարի:

Մարզում կոշտ թափոնների վերամշակման գործարանները բացակայում են: Համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր: Քաղաքներից երեքը (Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ) ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության 34.7%-ը: Նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրի տարածքը պարսպապատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, կազմակերպել աղբի տեսակավորում, աղբավայրում կատարել պարբերական հողածածկում:

02543163 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

«Վայոց ձոր-3» տարածաշրջանի գյուղական համայնքում տեղակայված են գործող 9 գերեզմանոց, ընդհանուր 20հա տարածքում: Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերին համապատասխան: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Միկրոռեգիոնի պահանջն ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների նկատմամբ կազմում է 948,46հա: Հողային ռեսուրսների սակավությամբ պայմանավորված կանաչ տարածքների դեֆիցիտը կլրացվի տեղական նշանակության կարճատև հանգստի կազմակերպմանը նպաստող և բնակավայրի բարենպաստ մատչելիության գոտում գտնվող բնակարանամերձ ազատ տարածքներում:

Համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար նախատեսվում է.

- համայնքապետարաններում բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում,
- նախագծերին և ծրագրերին համապատասխան վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում,
- ոռոգման համակարգի զարգացման և բարեփոխման ապահովում:

Նախագծով նախատեսվում է այգիներ, սպորտ-հրապարակներ՝ կանաչ գոտով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Բացի դրանից նախատեսվում է նաև մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում:

Համաձայն «Վայոց ձոր-3» տարածաշրջանի զարգացման ծրագրի, բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական և սոցիալական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցում և բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- հասարակական և արտադրական նշանակության վնասված շինությունների և կառույցների վերականգնում,
- ճանապարհի եզրերին, ռեկրեացիոն գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում,
- համայնքների տարածքում աղբահանման և տեսակավորման կազմակերպում,
- ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի և աղբամշակման գործարանների կառուցում,
- կատարել աղբի տեսակավորում,

- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,
- ասֆալտապատման, ճանապարհաշինության աշխատանքներ,
- Վայք քաղաքում եռամսյակը մեկ շրջակա միջավայրի (օդ, ջուր, հող) մոնիթորինգի կազմակերպում,
- մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա խիստ վերահսկողության սահմանում, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
- ամբողջությամբ անցնել գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները տարեկան 64.66տ/տարի,
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ:

Վայոց ձորի մարզի գյուղական համայնքների զարգացման հիմնական ուղղություններն են՝

- արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացումը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպումը,
- շրջակա միջավայրի բարելավումն և պահպանումը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ- կենցաղային համակարգի զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությունը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությունը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովումը,
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող հատվածների վերանորոգում, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայում և կազմակերպումը,
- գյուղատնտեսական բարձրորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարման, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձաններին վնաս պատճառման բացառումը,
- հիմնական գործառնական գոտիների վերանայում և հստակեցումը,
- բոլոր համայնքների գազաֆիկացումը,
- համայնքներում բնակչության ապահովումը խմելու ջրով,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացումը և ընդլայնումը,
- աղբավայրերի նախատեսումը սանիտարական գոտիների պահպանմամբ,
- գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի նախագծումը և գործարկումը,
- նախատեսել նոր տեխնոլոգիաներ՝ արևային էներգիայով և բիոգազով ջեռուցման համար,
- նախատեսել աղբի տեսակավորում:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափոնների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:

Ընդհանուր առմամբ Վայոց ձորի մարզի «Վայոց ձոր-3» համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Պատճառաբանական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Օնլայն հարթակով իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Վայոց ձորի մարզի «Վայոց ձոր-3» համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Հիմնադրութային փաստաթղթով նախատեսվող գյուղատնտեսական, շինարարական և այլ աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած հնարավոր պատմամշակութային և հնագիտական շերտերի առկայության դեպքում անհրաժեշտ է հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացությունը ստանալուց հետո:

- Հիմնադրութային փաստաթղթով նախատեսվող գյուղատնտեսական, շինարարական և այլ աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած Կարմիր Գրքերում գրանցված բույսերի և կենդանիների առանձնյակների, պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ եզրակացությունը ստանալուց հետո:
- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ կողմից ներկայացված Վայոց ձորի մարզի «Վայոց ձոր-3» միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Ա. Վարդանյան